



**Կոպեռնիկոսի  
արձանը Զալցբուրգում  
(Ավստրիա)**

Անգնահատելի է լեհ գիտնական Ն. Կոպեռնիկոսի (1473-1543)՝ աստղագետի, մաթեմատիկոսի, տնտեսագետի ներդրումը գիտության զարգացման մեջ: Լեհաստանում նրա հիշատակը հավերժացնող մի քարակոթող կա, որի վրա փորագրված է. «Արեգակը կանգնեցնողին, Երկիրը տեղաշարժողին»: Եվ, իսկապես, նա համարձակություն ունեցավ դեմ գնալ մարդկության շորջ երկու հազար տարվա ընթացքում ձևավորված և աներեր ճշմարտության կարգավիճակ սրացած համոզմունքներին: Նա ասաց.անշարժ է ոչ թե Երկիրը, այլ Արեգակը: Վերածնության դարաշրջանը իր առաջընթաց զարգացման անկասելի միտումով հանդերձ, մի շարք առումներով մոսայլ ժամանակաշրջան էր: Ուրնձգություն կատարել աստիճանաշարժան դոգմաների դեմ, կասկածի տակ առնել Երկրի անշարժության մասին պնդումը՝ նշանակում էր արժանա-

նալ խարոյկի բոցերում այրվելու դաժան բախարին: Ինկվիզիցիան այդպես վարվեց Ջորդանո Բրունոյի հետ, Գալիլեյին ստորացրեց՝ ստիպելով հրապարակալ հրաժարվել Երկրի պտույտի մասին իր գաղափարներից: Դարերի ընթացքում հազարավոր մրածողներ՝ բնագետներ ու փիլիսոփաներ արժանացան Բրունոյի կամ լավագույն դեպքում Գալիլեյի բախարին:

Կոպեռնիկոսի հանդեպ ճակատագիրն այդքան դաժան չգրնվեց: Բանն այն է, որ մարդիկ չէին հասկանում նրան, հաճախ ծաղրում էին և բավարարվում այդքանով: Երբ գլխի ընկան, որ իր արևակենտրոն համակարգի ուսմունքով նա սպառնում է սասանել հավարի հիմքերը, արդեն ուշ էր.հեղափոխական գաղափարները տարածվել էին ողջ Եվրոպայում:

Կոպեռնիկոսի մահից 73 տարի անց նրա «Երկնային ոլորտների շրջապտույտի մասին» աշխատությունը ինկվիզիցիան մտցրեց արգելված գրքերի ցուցակում:

Կոպեռնիկոսի արևակենտրոն ուսմունքի համաձայն, Երկիրն անշարժ չէ, այն մի սովորական մոլորակ է, որը մյուս մոլորակների նման պտույվում

է փիեզերքի կենսորոն հանդիսացող անշարժ Արեգակի շուրջը: Մինչ Եկեղեցին, վկայաբերելով Աստվածաշունչը, պնդում էր, որ Երկիրն է փիեզերքի կենսորոնում և նա է անշարժ, իսկ Արեգակն ու մոլորակները պտտվում են նրա շուրջը:

Կուպեռնիկոսի Արևակենսորոն համակարգը կրոնական դոգմաների դեմ պայքարում գիտության փարած առաջին խոշոր հաղթանակն էր:

Ահա թե ինչ է գրում Կուպեռնիկոսի ծննդյան 500ամյակին նվիրված իր խոսքում Վ. Համբարձումյանը.

«Կուպեռնիկոսի կողմից աշխարհի արևակենսորոն համակարգի սրեղծումը ճշգրիտ բնագիտության մեջ մեծագույն հեղափոխության սկիզբ հանդիսացավ: Ծագելով աստղագիտության ոլորտում, այդ հեղափոխությունը փարածվեց մեխանիկայի և ֆիզիկայի վրա: ...Լինելով գիտության մեջ մեծագույն նորարար և հեղափոխական, նոր համակարգ սրեղծելու ճանապարհին, Կուպեռնիկոսը ցույց տվեց աստղագիտության փվյալների խոր վերլուծության և նրանց մեկնաբանման հիանալի նմուշներ, դրսևորեց հանձարեղ ինտուիցիա և իսկական անվեհերություն, հրաժարվելով իր ժամանակի փրապետող հայացքներից»: